4.qxd 26/05/2022 15:42 Page 1

ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

# 1+1



Կայք էջ՝ 1u1.am

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՄԱՅԻՍԻ 2022թ. թիվ 4-5 (33)

## ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ՄԵՋ Է



Մարուսյա Սանասարյան, Երանոսի թ.1 մ/դ

Հաճախակի մենք տրվում ենք երազանքներին: Օրինակ, երբ նայում ենք աշխարհահռչակ սցենարիստների ու ռեժիսորների կողմից նկարահանված կատակերգությունները, մենք հիանում ենք դերասանների խաղով, ովքեր յուրաքանչյուր ժեստ, կատակ կամ խոսք կարողանում են հաղորդել, փոխանցել մեզ իրենց խաղի, միմիկայի, խոսքի, տեսքի և այլ միջոցներով: Մենք այդ կարճ ժամանակահատվածում ապրում ենք այդ ֆիլմի բովանդակության մեջ: Այդ կատակերգության, դրամայի կամ պատմական կինոյի նպատակն է՝ կարողանալ ներթափանցել յուրաքանչյուր մարդու մեջ՝ անկախ ազգությունից ու աշխարհագրական վայրից. յուրաքանչյուր ոք հասկանում է այդ կարոտը, ցավը, սարսափը: Դերասանի այդ խաղը կոչվում է պրոֆեսիոնալիզմ: Երբեք չի կարող լինել պրոֆեսիոնալ այն դերասանը, ռեժիսորը, սցենարիստը, որի աշխատանքը կարող են հավանել միայն նեղ շրջապատում, այսինքն՝ իր ազգի ներկայացուցիչները:

Մյուս օրինակները երգիչներն ու նկարիչներն են: Երգն ու նկարչությունը ազդում են մարդու զգայարանների վրա՝ տեսողական, լսողական, և մենք ապրում ենք այդ փոքր աշխարհում՝ զգալով ցավը, հաճույքը, ուրախությունը և այլն: Ինչպես կինոն, տվյալ դեպքում երաժշտությունը տվյալ հասարակության մշակույթի մասնիկ է, և ինչքանով հայ երգիչը ու երաժիշտը կկարողանա հուզել ֆինն ազգի զգացմունքը, կախված է մի մեծ խմբի աշխատանքից /սցենար, դիրիժոր, դիզայն, նկարիչ, ռեժիսոր, լույսի մասնագետ և այլն/:

Հարգելի՛ երեխաներ, վերջանում է ուսումնական տարին, և դուք պետք է որոշեք՝ ինչո՞վ եք զբաղվելու, որտե՞ղ եք սովորելու: Դա հեշտ բան չէ, քանի որ ակամայից, մի ներքին ձայնով դուք արդեն դա որոշել եք, բայց, ինչպես միշտ, սպասում ենք ինչ- որ մեկի աջակցությանն ու խորհրդին, չնայած դուք ձեզ ավելի լավ եք ճանաչում:

5-6 տարի առաջ Վրաստանի նախկին նախագահը մի հարցազրույցում պատմեց իր մանկության մասին: Նա նշեց, որ հիշում է իր մանկությունը, երբ հավաքվում էին պապի ընկերները, բարեկամները: Երեկոները նրանք քննարկում էին տարբեր իրադարձություններ թե՛ Վրաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, և այդ մթնոլորտը ձևավորեց Վրաստանի փրկիչ Սահակաշվիլուն: Ուզում եմ ասել, որ նրա պապը ու իր ընկերները նախկին գիտնականներ ու տարբեր հասարակական գործիչներ են եղել: Նա, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց, որ երբ ավարտեց դպրոցը, իրեն մտահոգում էին այն մտքերը, որոնք դեռ փոքր տարիքից էին հուզել:

Հարգելի՛ երեխաներ, հնարավոր է դուք ձեզ հարց տաք, ի՞նչ միտք ունի սովորելը, եթե ավարտելուց հետո արտագնա աշխատանքով պետք զբաղվեք, կամ աղջիկները կմտածեն, թե պետք է ամուսնանան ու զբաղվեն երեխաների դաստիարակությամբ, տնային գործերով: Կամ, ինչպես ասում են, թե «ձեռք բռնող» լինի, ես էլ կսովորեմ, կամ պետք է սովորել այն մասնագիտությունը, որը շատ վաստակ է ապահովում այսօր: Բոլոր այս հարցերին պատասխանելու համար մենք կներկայացնենք հայրենասիրության մասին մեր պատկերացումները:

Մեր հասարակության մեջ հայրենասերը ենթագիտակցորեն այն մարդն է, ով զենքը ձեռքին գնում է թուրքի հետ կռվելու և «լավ» կլիներ, որ նա չվերադառնար, քանի որ զոհվելուց հետո կարելի էր լացել, հուշարձան դնել ու սուտ երկար- բարակ խոսել, իսկ եթե, բարեբախտաբար, կռվից մարդիկ վերադառնում են, նրանց հասարակությունը կամ չի նկատում, կամ, վատագույն դեպքում ինչպես ասում են՝ եթե լավ տղա լինեիր, կզոհվեիր: Սա շատ ցավալի է, քանի որ դա հայրենասիրության աղավաղված ընկալումն է:

ՀարգելիՒ երեխաներ, հայրենասեր է նա, ով լավ է սովորում, որպեսզի զարգացնի գիտությունը, որ իր հայրենիք Հայաստանը դառնա ճանաչված աշխարհում: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ շինարար է եւ կառուցում է ամուր տներ, որոնք կարող են կանգնած մնալ դարերով: Ցանկացած զբոսաշրջիկ, գալով Հայաստան, իր հետ կտանի մեր պրոֆեսիոնալ ճարտարապետի, քանդակագործի, շինարարի համբավը և այն կտարածի աշխարհով մեկ: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ բժիշկ է և իր աշխատանքի շնորհիվ կբարձրացնի մարդկանց ապրելու միջին տարիքը և կնվազեցնի անբուժելի հիվանդությունների թիվը: Հայրենասերը նա է, ով պրոֆեսիոնալ դիվանագետ է և միշտ կպաշտպանի մեր հայրենիքի շահերը, հայրենասեր է մեր զինվորը, ով պետք է տիրապետի ժամանակակից ռազմարվեստին և անառիկ պահի մեր հայրենիքը:

Հարգելի՛ ավագ դասարանցիներ, դուք պարտավոր եք գիտակցել, որ այդ բոլորին և ավելիին հասնելու համար պետք է լավ սովորեք և օգտագործելով եվրոպական կրթական համակարգի առաջընթացը՝ դառնաք պրոֆեսիոնալ, որի դեպքում արդեն ինչ- որ մեկը չի կասկածի ձեր հայրենասիրությանը:

**«1+1»**



Մայիսը հագեցած և եռուզեռով լի ամիս էր Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի համար՝ մրցաշարեր, միջոցառումներ, աշխատաժողովներ:

Մայիսի մուտքը ազդարարվեց մայիսմեկյան հաղթանակներով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ֆուտբոլի թիմը հերթական անգամ մասնակցեց Գավառի սպորտդպրոցի կազմակերպած ֆուտբոլի մրցույթին և զբաղեցրեց 3-րդ պատվավոր հորիզոնականը: Աշակերտները և ֆուտբոլային թիմի մարզիչ Հ. Մովսիսյանը գավաթով, մեդալներով և պատվոգրերով վերադարձան՝ կրկին անգամ արդարացնելով իրենց երկրագուների սպասելիքները:

Մեր դպրոցի աշակերտներ Սյուզաննա Ավետիսյանը, Սյուզի Հակոբյանը, Վահե Գրիգորյանը և հասարակագիտության ուսուցչուհի Ռ. Հակոբյանը մասնակցեցին «ԿԶՆԱԿ» հիմնադրամի եւ Երևանի պետական համալսարանի կողմից համատեղ իրականացված «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» աշակերտական աշխատաժողովին, որտեղ հանդես եկան «Բուլլինգը և նրա հետևանքները» թեմայով և վերադարձան հաղթանակած, արժանացան պատվոգրի և ստացան խորհրդանշական նվերներ:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում գործող IQ

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Center Gegharkunik մենթալ թվաբանության կենտրոնի սաները իրենց մարզիչ Կ. Մխիթարյանի և դպրոցի տնօրեն Ն. Հակոբյանի ուղեկցությամբ այս տարի առաջին անգամ մասնակցեցին մենթալ թվաբանության միջազգային մեգա օլիմպիադային, որը տեղի ունեցավ սույն թվականի մայիսի 8-ին, Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Երեխաները մեծ ոգևորությամբ և տպավորություններով, 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի հաղթանակներով, նվերներով վերադարձան դպրոց:

Գավառի երկրագիտական թանգարանում տեղի ունեցած «Հայրենի եզերք» խորագրով բառբառների մարզային մրցույթ-փառատոնին մեր դպրոցը ներկայացավ Հովհ. Թումանյանի հայտնի «Գիքորը» ստեղծագործության բարբառային տարբերակով: Ստեղծագործությունը ներկայացրեց դպրոցի 11-րդ դասրանի աշակերտուհի Սյուզաննա Ավետիսյանը և արժանացավ հավաստագրի:

Մարզական մրցույթների անցուդարձին հաջորդելու եկավ միջոցառումների շարքը, որտեղ ամենաուշագրավը 1-ին դասարանի «Հրաժեշտ Այբբենարանին» խորագիրը կրող ցերեկույթն էր: Փոքրիկները զարմանահրաշ, հաճելի և գունագեղ օր պարգևեցին ուսուցիչներին, ծնողներին և աշակերտներին՝ իրենց երգով ու պարով:








Նրանք իրենց դասվարի՝ Ս. Վարդանյանի օգնությամբ առաջին անգամ բեմ բարձրացան և հանդես եկան պատվով:

Հաջորդ գեղեցիկ և գիտելիքներով հարուստ միջոցառումը դպրոցի 2-րդ դասարանի «Мóй букварь» խորագիրը կրող հանդեսն էր, որը ռուսաց լեզվի ուսուցչուհի Ա. Ավետիսյանի ջանքերի և երեխաների ջանասիրության արդյունքում իրականացավ տպավորիչ, ուրախ ու ջերմ միջավայրում: Դպրոցի տնօրինությունը, ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները միջոցառումից հեռացան անչափ ջերմ հուշերով:

Իսկ պատվոգրերի և հավաստագրերի շարքը համալրելու եկան մեր սաների «Համացանցի ռեսուրսների անվտանգ օգտագործում» կրթական հեռավար մուլտիմեդիա դասընթացի մասնակցության հավաստագրերը: Այս ամենը ևս մեկ անգամ գալիս է վկայելու, որ մեր դպրոցը լավագույնների շարքում է և մրցունակ է տարբեր ոլորտներում ու ասպարեզներում, որ մեր սաները ևս կարող են և փայլում են իրենց բանիմացությամբ, ուսման մեջ կատարելագործվելու ձգտումով:

## ԻՆՉՈ՞Ւ Է ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ՄԵԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ԻՍԿ ՄՅՈՒՍԸ՝ ՈՉ



Պատասխանատվության մասին թեման մենք ձեզ հետ քննարկել ենք, բայց կարծում եմ՝ ավելորդ չի լինի, եթե այլ անկյունից դիտարկենք այս հարցը: Պատասխանատվությունը պարտականություն է. պետք է պատասխանատու լինես քո արարքի, որոշումների ու քո հետագա քայլերի համար:

Մենք շատ ենք սիրում մեզանից ամեն ինչ հեռու մղել և գտնել մեղավորներ. ինչպես միշտ մեղքը հիմնականում ծնողներին են վերագրում, թե տեսեք՝ ծնողը մեղավոր է, որ չի կարողանում դաստիարակել պատասխանատու երեխա, բայց երբ այդ երեխաները մեծանում են և դառնում ծնողներ, նրանք ու՞մ պիտի մեղադրեն:

Երբ ես փոքր էի, տատիս օգնում էի՝ կովը կթել. դույլ էի տալիս կամ գոգնոց ու նայում, թե ինչպես է այդ գործողությունն ընթանում: Լինում էր այնպես՝ մեր կովը քիչ էր կաթ տալիս, որ մածուն պատրաստեին, այդ ժամանակ տատս ինձ տալիս էր փոքր դույլ, որը ուներ կափարիչ, ուղարկում էր հարևանի տուն և շեշտում, թե որ հարևանից կաթ ուզեմ: Ես փոքր էի ու չէի հասկանում, թե տատս պարտքով հաց և կաթ ինչու ոչ բոլոր հարևաններից էր խնդրում: Երբ մեծացա, հասկացա ամեն ինչ՝ խնդիրը տվյալ մարդկանց պատասխանատվության մեջ էր:

Երբ մարդը պահում է կով, նա իր վրա վերցնում է պատասխանատվություն, որ կովին պետք է կերակրի ժամանակին, մաքրի կովի տակը, մաքրի կովին իր իսկ կեղտից:

Մարդը պետք է կրի պատասխանատվություն, որ ամեն անգամ կովին կթելիս պահպանի սանիտարական կանոնները՝ մաքուր դույլի մեջ կթի, կովի կուրծքը լվացի: Այդ ամենը պահպանելով՝ կաթից տհաճ հոտ չի գա :

Բայց այս ամենը տեսնող երեխան, ով դառնում է հայր, մայր, տատիկ, պապիկ, ինչու՞ է այդպես էլ մնում անպատասխանատու: Դա նշանակում է, որ երբ երեխան գնում է դպրոց, նա ուզում է, թե չէ, պետք է սովորի օգնել ծնողներին, չպետք է ջարդի խաղալիքները, դա իր պարտականությունն է: Երեխան փոքր հասակից պետք է պահի և պահպանի կանոնները, ափսոս, որ շատ ու շատ ծնողներ չեն կարևորում այդ հասարակ թվացող հարցը, և երեխան մեծանալով դառնում է անպատասխանատու ինժեներ, իրավագետ, զինվորական և, իհարկե, պատգամավոր:

ա/ Օրինակները իմ մանկությունից են և չունեն նպատակ որևէ մեկին նեղացնելու:

բ/ Երեխանե՛ր, այլ ելք չունեք, պետք է սովորեք ինչքան հնարավոր է , պետք է կատարեք այն բոլոր պարտականությունները, որոնք ձեր վրա դրված են, և ժամանակի ընթացքում մենք կունենանք պատասխանատու հասարակություն:

**Մանուշակ Թովմասյան**
**Հոգեբան-խորհրդատու**

## ՍՊԻՏԱԿ ԷՇԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պապս ուներ մի սպիտակ էշ: Մենք բոլորով շատ էինք սիրում այդ կենդանուն ոչ թե նրա համար, որ նա շատ բեռ էր տանում կամ սպիտակ գույն ուներ, այլ նրա համար, որ նա խելոք էր:

Երբ փոքր էի, հիշում եմ, որ մարդիկ կարտոֆիլը դաշտերից հիմնականում էշի վրա բարձած տուն էին բերում: Հայրս և մայրս կարտոֆիլի երկու պարկ բարձում էին էշի վրա, և ես էշի հետևից ընկած բերում էի տուն: Տատս ինձ օգնում էր՝ դատարկել կարտոֆիլը, և ես նստում էի էշին և հետ վերադառնում դաշտ: Ես շատ էի սիրում բերքահավաքի այդ ժամանակաշրջանը, քանի որ տանից մինչև հողամաս էշի վրա նստած էի գնում, բայց պապիս սպիտակ էշը այդքան էլ անխելք չէր. ինչքան հիշում եմ , միշտ ճանապարհի կեսը քայլում էր հանդարտ , իսկ երբ արդեն ճանապարհը դժվարանցանելի էր դառնում, փորձում էր ինձ իր վրայից ցած գցել, անկեծ ասած, նրան դա միշտ հաջողվում էր: Լինում էին դեպքեր, երբ ես ստանում էի թեթև վնասվածքներ, բայց երբ մայրս հարցնում էր՝ ինչ է պատահել, ես թաքցնում էի մեր սպիտակ էշի արածը՝ պատճառաբանելով, որ ոտքս կպավ քարին կամ ինչ–ինչ ուրիշ պատճառներ. լավ հիշում եմ այդ պահերը , երբ հայրս, գլուխը թափահարելով, անհանգստացած ասում էր.

- Այ բալա՛, ե՞րբ կսովորես ոտքերիդ տակ նայել:

Հայրս էլ էր շատ սիրում պապիս սպիտակ էշին. սանրում էր նրան, լողացնում և լավ կերակրում, քանի որ այդ խեղճ կենդանին խոտհավաքի ժամանակ շատ էր աշխատում, երբ գիշերները գնում էինք խոտ գողանալու կոլխոզի դեզերից, որովհետև մեր ունեցած դաշտերի խոտը չէր բավարարում մեր կենդանիներին՝ կովերին և ոչխարներին:

Մենք ունեինք մի բարեկամ, նա նույնպես էշ ուներ, որը ավելի շատ բեռ էր տանում, բայց հայրս առավելությունը տալիս էր սպիտակ էշին, քանի որ նա ենթարկվում էր հրամաններին. օրինակ՝ կարող էինք նրան բարձել խոտով և ասել՝ գնա տուն, նա դա կատարում էր: Իմ փոքր եղբայրն էլ էր շատ սիրում այդ էշին, քանի որ երբ էշը զգում էր, որ երեխա է նստած մեջքին, ցած չէր գցում: Հիշում եմ, որ եղբայրս իր հարգանքը ու գոհունակությունը հայտնելու համար ասում էր.

-Պապիկի է՛շ ջան, ես քո ոտերը ուտեմ:

Հարգելի՛ երեխաներ, մենք էլ կենսաբանական աշխարհի ներկայացուցիչներ ենք, և իզուր չէ, որ երկրագնդի վրա ապրում են հազարավոր տեսակի բույսեր ու կենդանիներ, որոնցից ամենագիտակիցը մարդն է: Ցավոք, ոչ բոլոր մարդիկ են գիտակցում ապրել գիտակցաբար, շատ շատերն են դեռ առաջնորդվում կենդանական ռեֆլեքսով, սովորություններով, մենք դա կարող ենք տեսնել կատուների, շների, էշերի և մյուս կենդանիների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից:

Իմ պապի էշի վառ օրինակով կենդանական աշխարհը կարող է ապրել ավելի գիտակից, բայց նրանց ցույց պետք է տալ համապատասխան վերաբերմունքը:



Գիտնականները գրեթե պարզել են, որ մարդու մարմինը մահանում է, բայց հոգին շարունակում է ապրել ուրիշի մարմնի մեջ՝ տալով նրան բովանդակություն:

Եթե արարիչը ինձ կուղղորդի, որ իմ հոգին պետք է տամ էշին, ես կհամաձայնեմ միայն այն դեպքում, երբ այդ նորածին քուռակի մայրը ու հայրը խելոք ու գիտակից կենդանիներ լինեն, իսկ գույնը կապ չունի:

**Ջեդկ**

## ՈՍՏԻԿԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ



Ոստիկանի գործը այդքան էլ հեշտ գործ չէ: Ես դա լավ գիտեմ, որովհետև հորեղբայրս ոստիկան է: Ոստիկանները գիշեր-ցերեկ աշխատում են՝ պաշտպանելով մեր երկիրը ավազակներից, գողերից, հանցագործներից: Եկեք մի պահ պատկերացնենք, որ աշխարհում ոչ մի ոստիկան չկա, ի՞նչ կլինի: Կլինեն շատ գողություններ և սպանություններ: Ոստիկաններից վախենալ պետք չէ: Շատ երեխաներ, նախկինում նաև ես, շատ էինք վախենում ոստիկաններից: Սկզբում նույնիսկ չէինք բարևում՝ մտածելով՝ կձերբակալեն: Բայց հիմա մեծ ենք և հասկանում ենք, որ առանց նրանց հնարավոր չէ հանգիստ և խաղաղ ապրել: Ոստիկանները մեր պաշտպաններն են և անվտանգության երաշխիքը: Ոստիկաններ կան, որոնք օրերով տուն չեն գալիս: Ճիշտ է, նրանք կարոտում են իրենց ընտանիքներին, բայց դա իրենց գործն է: Նրանց օրվա ցանկացած ժամի կարող են զանգել ու կանչել: Հորեղբայրս աշխատում է Վարդենիսում և ամիսը երկու- երեք անգամ է գյուղ գալիս: Երբ հեռուստացույցով լսում եմ, որ Վարդենիսում կրակոցներ կան, վախենում եմ, և օրս սարսափով է անցնում:

Պատահել է, որ փողոցում լսել եմ ոստիկանական մեքենայի ձայնային ազդանշանը, և ամբողջ մարմնովս սարսուռ է անցել՝ մտածելով՝ ո՞ւր են նրանք գնում, ի՞նչ է պատահել... Դժվար է, շատ դժվար ոստիկանի գործը, և հաճախ նրանք վտանգում են իրենց կյանքը՝ հանուն մեր խաղաղ ու անվտանգ առօրյայի:

Ես քեզ սիրում եմ, ոստիկա՜ն:

**Լիաննա Հարոյան, 6-րդ դասարան,**
**Զոլաքար գյուղի N1 միջն. դպրոց**



Ոստիկանները շատ կարևոր դեր ունեն մեր կյանքում: Սակայն շատ անգամ ոստիկան հասկացությունը մեզ մոտ բացասաբար է ընդունվում: Դա նրանից է, որ ինչ-որ բանից հետ մղելու համար ծնողները օգտագործում են «ոստիկանը կբռնի», «ոստիկանն եկավ», «թաքնվի՜ր, ոստիկան է գալիս» արտահայտությունները: Բայց ես հնարավորություն եմ ունեցել՝ ծանոթանալու այս մասնագիտությանը մոտիկից, որովհետև իմ քեռին ոստիկան է: Նա ինձ երբեմն պատմում է պատմություններ իր աշխատանքային առօրյայից, ու ես հոգուս խորքում հիանում եմ, ապա պատկերացնում, թե ինչքան հետաքրքիր է նրա մասնագիտությունը: Այդ պատմությունների հերոսներին ես պատկերացնում եմ խիզախ, բարի, խելամիտ ու արդար: Հենց այդ պատմություններով ներշնչված՝ հաճախ ենք մենք մեր բակի երեխաներով մեզ ոստիկաններ պատկերացնում: Բայց ոչ միշտ ենք սովորական ոստիկաններ, այլ իսկական Շերլոք Հոլմս՝ այսինքն՝ հետախույզներ, քանի որ ոստիկանության ամենահետաքրքիր ճյուղը հետախուզությունն է:

Այդուհանդերձ, պետք է խոստովանեմ, որ իմ երազանքից ելնելով, ես կապահովեմ կիբեռանվտանգություն:

Այս ամենը մի կողմ թողնելով՝ ես ուզում եմ ասել, որ ձեր աշխատանքը շատ վտանգավոր է, ու դուք երբեմն վտանգում եք ձեր կյանքը՝ հանուն հասարակության անվտանգության:

Մենք պարտական ենք Ձեզ:

**Ավետ Մրտեյան, 6-րդ դասարան,**
**Զոլաքար գյուղի N 1միջն. դպրոց**

## ՄԱՆԿՈՒԹՅԱՆՍ ԱՄԵՆԱԱՆՀԵԹԵԹ ԵՐԱԶԱՆՔԸ

Մանկություն՝ իմ կյանքի ամենաուրախ, ամենաերջանիկ ու անհոգ տարիները: Որքան հրաշալի հուշեր ու անկեղծ ժպիտներ կան այնտեղ: Ինչքան եմ անհոգ վազվզել, անվերջ խաղացել...

Այնտեղ ամեն ինչ այնքա՛ն գեղեցիկ ու ներդաշնակ էր...

Երբ փոքր էի, ես ունեի մի անհեթեթ երազանք՝ ուզում էի շուտ մեծանալ... Երբ փոքր ենք լինում, միշտ երազում ենք մեծանալու մասին, բայց երբ մեծանում ենք, նորից ցանկանում ենք վերադառնալ մանկություն, նորից երեխա լինել...

Չենք գիտակցում, որ մանկությունը մեզ մի անգամ է տրվում, բայց ժամանակի անկասելի վազք-ընթացքի պատճառով դառնում է անդարձ անցյալ...

Մանկություն. մեր կյանքի թերևս ամենահրաշալի ժամանակահատվածը...

Գնդակ, տիկնիկ, Mario, անունգոռոցի, գործագործ... Անվերջ կարող եմ շարունակել այս շարքը: Սրանք են իմ մանկության ամենաները...

Մակություն, որտեղ չկային ո՜չ հեռախոս, ո՜չ համացանց, ո՜չ հեռախոսային խաղեր, ո՜չ էլ սոցիալական էջեր, սակայն փոխարենը կային անկեղծություն, մաքրություն ու պարզություն:

Հիշում եմ՝ սենյակումս գորգ կար՝ նախշերով, գույնզգույն, հայկականը հիշեցնող: Քնելուց առաջ միշտ նայում էի, հաշվում նախշերը, տարբերակում գույներն ու երազում, որ մեծանամ, գորգագործ դառնամ: Գորգ գործեմ, որ ինձ նման երեխաները պառկեն ու նայեն... Հիմա փոխվել են ժամանակները, փոխվել են մարդիկ ու նրանց մտածելակերպը: Չքացել է, չկա այն ամենը, ինչը կար... Հիմա կա եսի մեջ ամփոփված



մարդ, որն ապրում է միայն իր համար, չի մտածում շրջապատող մարդկանց բարօրության մասին...

Ավա՛ղ, անդարձ կորցրել եմ դեպի զարմանահրաշ մանկություն տանող ճանապարհը, չկա հետդարձի հնար...

Գալիս է մի օր, երբ հասկանում ենք, որ տարիքը էլ չենք կարող ցույց տալ ձեռքի մատների վրա, և որ շրջապատի կարծիքը մեզ համար դառնում է չափազանց կարևոր ու թելադրող..

Այնքա՛ն դժվար է հավատալ, որ մանկությունս ինձնից հեռացել է անդարձ ու այսուհետ ապրելու է միայն իմ հուշերում:

Ժամանա՜կ, կա՜նգ առ, ես չեմ ուզում մեծանալ... Ես ուզում եմ մնալ երեխա, նախկինի պես անվերապահ հավատալ հրաշքներին ու հեքիաթներին, վստահ լինել, որ բարին է ամենազոր ու հաղթող...

Մանկությունը յուրաքանչյուրիս համար հրաշալի սկիզբ է...

**Զինաիդա Եղիազարյան**
**12-րդ դասարան**
**Գագարինի միջնակարգ դպրոց**

## ՄԵՐ ԼԻԱՆԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ



Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում ավանդույթ է դարձել՝ օլիմպիադաների հանրապետական փուլից վերադառնալ հաղթանակով:

2021-2022 ուստարվա «ՀԵՊ» առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում, որը տեղի ունեցավ մարտի 26-ին, դպրոցի 9-րդԱ դասարանի աշակերտուհի Լիանա Նավասարդյանը՝ 20 միավորով, գրավեց I տեղը՝ արժանանալով I կարգի դիպլոմի և անվանական կրթաթոշակի:

Այս փայլուն հաղթանակի մեջ իր անփոխարինելի դերն ունի «ՀԵՊ» առարկայի ուսուցչուհի Քնարիկ Քոչարյանը, ում անմնացորդ նվիրումն իր սիրած գործին, ցանկալի պտուղներ է տալիս մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում:

Բազմավաստակ ուսուցչուհին իր առարկայի հանդեպ արթնացնում է սեր ու նվիրում,արժևորում առարկայի դերն ու նշանակությունը ազգի պահպանման ու զարգացման գործում: Պատահական չեն հաջողությունները. ամեն տարի Քնարիկ Քոչարյանի սաները հանրապետական օլիմպիադայում գրավում են պատվավոր տեղեր՝ բարձր անուն ու ճանաչում բերելով թե՛ Գեղարքունիքի մարզին, և թե՛ Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցին:

Այս հաջողությունների մեջ մեծ է նաև դպրոցի տնօրեն Աիդա Մուրադյանի ներդրումը, ով մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում օլիմպիադաները, խրախուսում և օժանդակում այդ կարևոր գործին:

**Սալվինազ Սիմոնյան**
**9-րդ Ա դասարանի դասղեկ**

## ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների համատեղ ուժերով /ուսուցիչ՝ Ա. Հավտոյան / տեղի ունեցավ հուշ- ցերեկույթ՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 107-ամյա տարելիցին:

Ցերեկույթի նպատակն էր՝ ներկայացնել Օսմանյան կայսրության ամենամութ օրերին սկսված ողբերգությունը, որը հիմք հանդիսացավ Հայոց ցեղասպանության իրագործման համար: Հայոց ցեղասպանությունը կազմակերպող ոճրագործները մինչև օրս դատապարտված և մեղադրված չեն:

Սա է պատմությունը...

Հուշ-ցերեկույթի սկզբում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ցեղասպանությանը զոհ դարձած անմեղ նահատակների հիշատակը: Ներկայացվեց փոքրիկ բեմադրություն հայ ժողովրդի խաղաղ կյանքի մասին, ինչը երիտթուրքերի վայրագությունների արդյունքում կտրուկ փոխվեց: Բեմադրությունն անչափ հուզել էր ներկաներին...

Աշակերտները մեծ պատասխանատվությամբ էին պատրաստվել հուշ- ցերեկույթին՝ գիտակցելով, որ իրենց նախնիների հոգու 107-ամյա կանչը հնչում և լսվում է նաև այսօր ու լսելի կլինի միշտ:

Ցերեկույթի ընթացքում ներկայացվեց՝ ի՞նչ գաղափար էր ընկած ցեղասպանության հիմքում, ե՞րբ և ինչպե՞ս էր այն կազմակերպվել և իրագործվել, ո՞րն էր նպատակը, ովքե՞ր էին ծրագրի կազմակերպիչները և իրագործողները, ե՞րբ է առաջին անգամ «ցեղասպանություն» եզրույթն օգտագործվել, և ո՞ր երկներն են այդ ողբերգությունը և վայրագությունը անվանել ցեղասպանություն: Շնորհակալական խոսքեր հնչեցին աշխարհի այն 34 երկրների լեզուներով, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Անդրադարձ եղավ նաև հայ վրիժառուների կողմից իրա-



կանացված «Նեմեսիս» գործողությանը:

Հուշ-ցերեկույթն ամփոփվեց աշակերտների ոգեղեն երգով, որով նրանք հաստատեցին, որ հիշողությունը ջնջել չի լինի: Ինքնապաշտպանական փայլուն օրինակ դարձած Վան քաղաքի պայքարի պատգամն է փոխանցվում սերունդներին:

Մե՛նք հավատարիմ ենք մեր արմատներին:

Չե՛նք մոռանա մեր ներսի պատվավոր հային: Ցեղասպանությունը մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն է: Ինչպես ասել է հոլոքոստը վերապրած Էլի Վիզելը՝ «Ժխտել, նշանակում է կրկին սպանել»:

Հիշո՛ւմ և պահանջո՛ւմ ենք:

## ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԴԱՍ՝ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑ



Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան դպրոցում «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Մարինե Միլիտոնյանը 5-րդ Բ դասարանում կազմակերպեց ուսուցողական դաս «Մթնոլորտ» թեմայի վերաբերյալ:

Աշակերտները բացատրեցին, թե ինչպես են առաջանում մթնոլորտային տեղումները, ինչպես փոփոխվում եղանակն ու կլիման:

Հեքիաթի տեսքով նրանք ներկայացրին «Թթվային անձրև» թեման: «Ֆոտոսինթեզը», «Օզոնային շերտը», «Ջրի աղտոտումը» և «Հին Հռոմը» մեղադրեցին «Թթվային անձրևին»:

Խմբերը համագործակցված աշխատանքով ամփոփեցին «Մթնոլորտ» թեման՝ օգտագործելով «Հնգյակի», «Վենի դիագրամ», «Քարտեզագրում», «Ապագայի անիվ» մեթոդները:

«Ելքի քարտ»-ի միջոցով ուսուցչուհին պարզեց՝ ինչ սովորեցին դասից, և ինչ հարց մնաց անպատասխան:

Դասն ուսանելի էր, բովանդակալից:

Նպատակային օգտագործեցին դասավանդման նոր մեթոդներ ու հնարներ:

## ԱՊԱԳԱ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍԸ

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլին ԿԳ Նախարարության կողմից Գովասանագրով պարգևատրվեց Վարդաձորի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտ Գագիկ Պետրոսյանը: Վերջինս հրավերք է ստացել ֆիզմաթի հատուկ դպրոցում ուսումը շարունակելու: Մաղթում ենք հաջողություններ:





Անի Ալոյան, Երանոսի թ. 1 մ/դ

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ ԵՎ ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ



Ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշը վարքային և ճանաչողական բաղադրիչներ պարունակող հավաքական համախտանիշ է: Այն իրենից ներկայացնում է ուշադրությունը կենտրոնացնելու, մղումային վարքը վերահսկելու, ինքնակառավարվելու և ինքնակազմակերպվելու դժվարություն: Ուշադրության պակաս և գերակտիվություն ունեցող երեխաների մոտ այս դժվարություններն արտացոլվում են նրանց հաղորդակցման ոլորտում՝ առաջ բերելով խնդիրներ միջանձնային հարաբերություններում: Այս երեխաները դժվարությամբ են հարմարվում շրջապատին և իրենց անցանկալի վարքի պատճառով հիմնականում չեն ընդունվում շրջապատի, մասնավորապես հասակակիցների շրջանում: Այս համախտանիշն ունեցող երեխաները ի վիճակի չեն կամ չեն ցանկանում կառավարել իրենց զգացմունքները: Նրանց համար դժվար է լինել հանգիստ և կենտրոնացած: Նրանք մշտապես մի զբաղմունքից անցնում են մյուսին: Հաճախ մանկավարժների հետ զրույցներում գերակտիվ երեխաների մայրերը նշում են, որ խաղի ժամանակ իրենց երեխաները մտնում են կոնֆլիկտի մեջ և ցուցաբերում են ագրեսիվություն: Այս ամենը բարդացնում է ուշադրության պակաս և գերակտիվություն ունեցող երեխայի հարաբերությունները հասակակիցների հետ: Արագաշարժ, իմպուլսիվ այս երեխաները դժվարանում են իրենց պահել այնպես, ինչպես ընդունված է, այդ իսկ պատճառով նրանք երբեմն մանկավարժների և նույնիսկ ծնողների համար դառնում են «անհարմար» երեխաներ: Ցուցիչներ, որոնք կարող են վկայել երեխայի մոտ ուշադրության պակասի և գերակտիվության առկայության մասին՝

1. Անհետևողական են, նրանց համար դժվար է երկար ժամանակ կենտրոնացնել ուշադրությունը:
2. Չեն լսում, երբ դիմում են իրենց:
3. Մեծ ոգևորությամբ սկսում են գործը կամ առաջադրանքը, բայց այդպես էլ չեն ավարտում այն:
4. Կազմակերպչական աշխատանքներում հանդիպում են դժվարությունների:
5. Հաճախ կորցնում են իրերը:
6. Խուսափում են ձանձրալի և մտավոր լարվածություն պահանջող առաջադրանքներից:
7. Մոռացկոտություն են դրսևորում: Անընդհատ շուռումուռ են գալիս: Անհանգստության նախանշաններ են ցուցաբերում (մատներով թմբկահարում են, շարժվում են աթոռին նստած): Շատ ավելի քիչ են քնում, քան մյուս երեխաները, նույնիսկ վաղ մանկական տարիքում: Շատախոսում են:

Իմպուլսիվություն են ցուցաբերում, սկսում են պատասխանել՝ մինչև վերջ հարցը չլսելով: Վատ են կենտրոնացնում ուշադրությունը: Ի վիճակի չեն սպասել իրենց հերթին, հաճախ են ընդհատում, միջամտում ուրիշներին: Առաջադրանքները կատարելիս իրենց պահում են տարբեր կերպ (որոշ պարապմունքների ժամանակ հանգիստ են, որոշների ժամանակ՝ ոչ): Անկախ այս հանգամանքից՝ ուշադրության պակաս և գերակտիվություն ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ քայլերը՝

. Խուսափեք միաժամանակ մեծ թվով հրահանգներ և առաջադրանքներ ներկայացնելուց:

. Հրահանգները, առաջադրանքները ներկայացրեք հերթականությամբ:

. Ավելի շատ ժամանակ տրամադրեք առաջադրանքն ավարտելուն:

. Առաջադրանքները բաժանեք փոքր մասերի:

. Օգտագործեք վայրկենաչափ:

. Սահմանեք նպատակներ և միասին քննարկեք քայլերն ու դրանց հաջորդականությունը:

. Երեխայի հետ միասին սահմանեք պարզ կանոններ, դրանք երեխային հասանելի դարձնելու նպատակով օգտագործեք նկարներ:

. Երեխային նկատեք հատկապես այն պահերին, երբ նա ցանկալի վարք է դրսևորում և խրախուսեք նրան:

. Օգտագործեք խաղային իրավիճակները բարդ իրավիճակները հաղթահարելու, դրական վարքի ձևեր մոդելավորելու նպատակով:

. Աշխատեք երեխային հնարավորինս զերծ պահել զգայական գերբեռնումից, ավելորդ գրգռիչներից, շեղող ազդակների ազդեցությունից:

. Պարապմունքների ընթացքում երեխայի համար ընտրեք այնպիսի տեղ, որ նա ձեր տեսադաշտում լինի:

. Խմբում կիրառեք տարբեր միջոցներ ոչ խոսքային ուղղորդումներ կատարելու նպատակով, օրինակ՝ գունավոր քարտեր (յուրաքանչյուր գույն ունի իր նշանակությունը, օրինակ՝ լռության գույնը սպիտակն է և այլն), դափ, զանգ:

. Օգտագործեք ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ (հայացք, ժեստ, դիմախաղ) իր վարքի կարգավորման անհրաժեշտության մասին երեխային հուշելու և ցանկալի վարքը խրախուսելու համար:

. Հստակ ու պարզ բացատրեք արարքների հետևանքները:

. Ակտիվությունը սպառելու եղանակներ գտեք:

Հոգեբանական աջակցության և մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում անհրաժեշտ է համագործակցել ծնողների հետ: Ուշադրության պակաս և գերակտիվություն ունեցող երեխաների հոգեբանական աջակցության գործիքակազմում ուրույն տեղ են զբաղեցնում խաղերը, խաղային վարժություններն ու խաղային թերապիան, շատ օգտակար է նաև սպորտով զբաղվելը:

**Աննա Ավետիսյան**
**Մանկավարժ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## 2022 - 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Շրջանավարտները կստանան հետևյալ որակավորումները՝

I. Բակալավրի թվով 6 կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ.
1. Կառավարման բակալավրի աստիճան
2. Ճարտարագիտության բակալավրի աստիճան
3. Անվտանգության ծառայության բակալավրի աստիճան

II. Մագիստրոսի թվով 6 կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ՝
1. Իրավագիտության մագիստրոսի աստիճան
2. Կառավարման մագիստրոսի աստիճան
3. Անվտանգության ծառայության մագիստրոսի աստիճան
4. Հոգեբանության մագիստրոսի աստիճան
5. Մանկավարժության մագիստրոսի աստիճան
6. Երկրաբանության մագիստրոսի աստիճան

III. Հետբուհական կրթություն (հայցորդություն)՝ «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ

IV. Միջին մասնագիտական թվով 3 կրթական ծրագրով առկա ուսուցմամբ՝
1. Տեխնիկ՝ Հրշեջփրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման
2. Մասնագետ՝ արտակարգ իրավիճակների կառա-վա-րման
3. Մասնագետ՝ Հրդեհային պաշտպանության

## 2022 - 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ՝

I. Բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ՝
1. Կառավարում (որակավորումը՝ կառավարման բակալավրի աստիճան)
2. Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնի---կայի շահագործում և սպասարկում (որակավորումը՝ ճարտարագիտության բակալավրի աստիճան)
3. Փրկարարական գործ (որակավորումը՝ անվտանգության ծառայության բակալավրի աստիճան)
4. Քաղաքացիական պաշտպանություն (որակավորումը՝ անվտանգության ծառայության բակալավրի աստիճան)
5. Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում (որակավորումը՝ անվտանգության ծառայության բակալավրի աստիճան)
6. Հրդեհային անվտանգություն (որակավորումը՝ անվտանգության ծառայության բակալավրի աստիճան)

II. Մագիստրոսի կրթական ծրագրով
առկա ուսուցում՝
1. Իրավագիտություն (ճգնաժամային իրավունք) (որակավորումը՝ իրավագիտության մագիստրոսի աստիճան)
2. Կառավարում (ճգնաժամային կառավարում) (որակավորումը՝ կառավարման մագիստրոսի աստիճան)
3. Փրկարարական գործ (որակավորումը՝ անվտանգության ծառայության մագիստրոսի աստիճան)

հեռակա ուսուցում՝
1. Կառավարում (ճգնաժամային կառավարում) (որակավորումը՝ կառավարման մագիստրոսի աստիճան)
2. Փրկարարական գործ (որակավորումը՝ անվտանգության ծառայության մագիստրոսի աստիճան)
3. Հոգեբանություն (որակավորումը՝ հոգեբանության մագիստրոսի աստիճան)
4. Նախնական զինվորական պատրաստություն (որակավորումը՝ մանկավարժության մագիստրոսի աստիճան)
5. Կիրառական սեյսմոլոգիա (որակավորումը՝ երկրաբանության մագիստրոսի աստիճան)

III. Հետբուհական կրթություն (հայցորդություն)՝ «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ:

IV. Միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով.
1. Հրշեջփրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (որակավորումը. Տեխնիկ՝ Հրշեջփրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման)
2. Կառավարում արտակարգ իրավիճակներում (որակավորումը. Մասնագետ՝ արտակարգ իրավիճակների կառավարման)
3. Հրդեհային պաշտպանություն (որակավորումը. Մասնագետ՝ Հրդեհային պաշտպանության)

Շրջանավարտները կստանան հետևյալ որակավորումներն ըստ կրթական ծրագրերի՝

I. Բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցում.
1. Որակավորումը՝ կառավարման բակալավրի աստիճան - Կառավարում կրթական ծրագրով
2. Որակավորումը՝ Ճարտարագիտության բակալավրի աստիճան - Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում կրթական ծրագրով
3. Որակավորումը՝ անվտանգության ծառայության բակալավրի աստիճան
. Փրկարարական գործ
. Քաղաքացիական պաշտպանություն
. Անվտանգությունն արտա-կարգ իրավիճակնե-րում
. Հրդեհային անվտանգություն կրթական ծրագրերով

II. Մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցում՝
4. Որակավորումը՝ իրավագիտության մագիստրոսի աստիճան - Իրավագիտություն (ճգնաժամային իրավունք) կրթական ծրագրերով
5. Որակավորումը՝ կառավարման մագիստրոսի աստիճան -Կառավարում (ճգնաժամային կառավարում) կրթական ծրագրերով
6. Որակավորումը՝ անվտանգության ծառայության մագիստրոսի աստիճան - Փրկարարական գործ կրթական ծրագրերով

V. Մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ՝
1. Որակավորումը՝ կառավարման մագիստրոսի աստիճան -Կառավարում (ճգնաժամային կառավարում) կրթական ծրագրով
2. Որակավորումը՝ անվտանգության ծառայության մագիստրոսի աստիճան - Փրկարարական գործ կրթական ծրագրով
3. Որակավորումը՝ հոգեբանության մագիստրոսի աստիճան - Հոգեբանություն կրթական ծրագրով
4. Որակավորումը՝ մանկավարժության մագիստրոսի աստիճան - Նախնական զինվորական պատրաստություն կրթական ծրագրով
5. (Որակավորումը՝ երկրաբանության մագիստրոսի աստիճան) - Կիրառական սեյսմոլոգիա կրթական ծրագրով

III. Հետբուհական կրթություն (հայցորդություն)՝ «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ:

IV. Միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով.
1. Որակավորումը. Տեխնիկ՝ Հրշեջփրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման - Հրշեջփրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում
2. Որակավորումը. Մասնագետ՝ արտակարգ իրավիճակների կառավարման - Կառավարում արտակարգ իրավիճակներում
3. Որակավորումը. Մասնագետ՝ Հրդեհային պաշտպանության - Հրդեհային պաշտպանություն

Խրախուսվում են միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց եւ լավ սովորողները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2022-2023 ուսումնական տարվա ընդունելությունը սկսվում է 2022 թվականի հունիսի 1-ից:

Ակադեմիան իրականացնում է առկա ու հեռակա ուսուցում միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի և հետբուհական կրթական ծրագրերով:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց եւ լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ 2-րդ կուրսում:

Ակադեմիան ուսուցում է իրականացնում նաեւ Ստեփանավան քաղաքում:

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գործունեությունը նպատակաուղղված է քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում մասնագետների պատրաստմանը:

Անհրաժեշտ փաստաթղթեր՝
1. Ավարտական փաստաթուղթ՝ վկայական, ատեստատ կամ դիպլոմ (դիպլոմի հետ պետք է ներկայացնել նաեւ միջուկը)
2. 4 լուսանկար (3x4 սմ չափսի)
3. Անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը եւ պատճենը
4. Սոցքարտ

Հեռ. 060 69 10 00/203, 208/

## «UPSHIFT» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մայիսի 20-ին տեղի ունեցավ «UPSHIFT» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագրի «Համայնքային երիտասարդական ծրագրերի» ներկայացման «BootCamp» Գավառ շնորհանդեսը: Նախապես հաջորդ փուլ անցած 10 թիմերից ընտրվելու էին 5-ը, որոնք էլ ֆինանսավորում էին ստանալու իրենց ծրագրերը կյանքի կոչելու համար: Թիմերին ողջույնի խոսքով ոգևորեցին «ՅՈՒՆԻՍԵՖ»-ի Հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի պատասխանատու Սիլվի Մեստրոնին, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի խորհրդի նախագահ Արթուր Նաջարյանը, Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչները, հյուրերը: Շնորհանդեսի ընթացքում թիմերը ներկայացրեցին իրենց ծրագրերը՝ ցուցադրելով տեսանյութեր ու սահիկաշարեր: Թիմերը իրենց ծրագրերի վրա աշխատել էին երեք շաբաթ, որի ընթացքում հասցրել էին կատարել սոցհարցումներ, ձեռք բերել բազմաթիվ պայմանավորվածություններ, կատարել հետազոտական աշխատանքներ, իրականացնել բյուջեի հաշվում, իրենց կցված մենթորների օգնությամբ և աջակցությամբ ավարտուն տեսքի հասցնել ներկայացվելիք ծրագրերը: Շնորհանդեսի ընթացքում թիմերը խոսեցին կատարվելիք աշխատանքների, ծրագրերի նորարարությունների, դրանց իրագործման անհրաժեշտության և կարևորության մասին: Նրանք հանդես եկան գեղեցիկ կատարումներով, ոգեւորեցին ժյուրիին իրենց հետաքրիր գաղափարներով: Ժյուրի քննարկումների արդյունքում ընտրվեց 5 գաղափար, որոնք ֆինանսավորում կստանան՝ իրենց ծրագրերը կյանքի կոչելու համար:



## ԼՌՈՒԹՅԱՆ ՁԱՅՆ

Լռությունը կյանքի կարևորագույն արժեքներից մեկն է, որն, ըստ իս, յուրաքանչյուրիս համար բազմաբնույթ է: Լռությունը ինձ համար հոգևոր հանգստություն է: Պահպանելով լռություն՝ ես կարողանում եմ հասկանալ ու բացահայտել ինքս ինձ ու ինձ շրջապատող աշխարհը: Հաճախ բառերն ավելորդ են, լռությունը խոսում է մեր փոխարեն, սակայն շատ քչերին է հաջողվում լսել, և ամենակարևորը՝ հասկանալ լռության ձայնը: Ձայն, որը մեկի համար աղմուկն է, մյուսի համար՝ ներքին հանգստությունը:



Մենք բոլորս ընդունում ենք լռության այն պահը, երբ չենք լսում ոչ մի ձայն: Ես կարծում եմ, որ լռության ձայնը ապրում է մեզնից ամեն մեկի հոգում, և այն սկսում է խոսել մեզ հետ միայն այն ժամանակ, երբ լռում են մնացած բոլոր ձայները, միայն այդ ձայնը գիտի մեր բոլոր խնդիրների մասին, միայն նա գիտի՝ մենք իսկապես ժպտու՞մ ենք, թե՞ ուղղակի ցույց ենք տալիս մեր ատամնաշարը: Երբ մենք կեղծ ժպիտով շփվում ենք մեզ տհաճ մարդու հետ, լռության ձայնը գոռում է ճշմարտությունը: Բայց շրջապատող աշխարհի ձայները արգելում են նրան խոսել, բոլորը վախենում են լռության ձայնից, քանի որ մարդիկ ունեն գաղտնիքներ, որոնց մասին չպետք է իմանան ուրիշները, մարդիկ ունեն վախեր, կոմպլեքսներ, ունեն զգացմունքներ, որոնցից վախենում են: Մենք վախենում ենք ընդունել այն փաստը, որ գտնվում ենք սխալ տեղում, որ ամեն օր մեր օրվա մեծ մասը ծախսում ենք անիմաստ բաների վրա, որ կորցնում ենք մեր թանկարժեք րոպեները, վախենում ենք, որովհետև մարդը շատ ծույլ արարած է, նա չի ցանկանում փոխել իր ապրելակերպը, իր գտնվելու վայրը:

Երբեմն ես լսում եմ լռությունը: Այո՜, ես չեմ գժվել: Պարզապես լինում են պահեր, երբ ոչինչ չի լինում լսելու, և ակամայից սկսում եմ լսել լռությունը: Շատ հետաքրքիր ձայն ունի, գիտե՞ք: Հաճախ ինքներդ ձեզ գտեք լռության մեջ և բավականին կլիցքաթափվեք կյանքի դառնություններից:

**Խաչատրյան Արշալույս**
**Այգուտի միջնակարգ դպրոց**

## ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԲԱԶԿԱՄԱՐՏԻԿԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱԳՐ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Գեղարքունիքի մարզի Ջողաքար գյուղի N1 միջնակարգ դպրոցի նախկին սան, 17-ամյա Արման Մրտեյանը 4 օրում 4 ոսկե մեդալ է նվաճել բազկամարտի Եվրոպայի առաջնությանը: Մրտեյանը նախ մասնակցել է բազկամարտի պատանեկան առաջնությանը, որտեղ 2 ոսկե մեդալ է նվաճել, ապա մասնակցել է 60 կգ քաշային կարգում մեծահասակների մրցաշարին և կրկին նվաճել 2 ոսկե մեդալ: Արման Մրտեյանը Բուխարեստից վերադարձավ 4 ոսկե մեդալով: Նշենք նաև, որ մրցաշարի հաղորդավարները Արման Մրտեյանին նոր անունով են կնքել՝ Հայկական Վագր (Armenian tiger):



4
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 05. 2022 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 1000
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1եւ1.հայ , 1u1.am